

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լեոնային Ղարաբաղի Ինֆնավար Մարզի հայու-
թեան տազնապր ծանրակշիռ տարողութիւն ստացած է եւ
դարձած՝ տազնապր ողջ հայութեան ի Մայր Հայաստան
եւ ի սփիւռս աշխարհի:

Հայ ազգային-ֆաղափական երեւ կուսակցութիւն-
ներս սկիզբէն ի վեր սերտ հետետողականութեամբ մեր
ամենօրեայ մտահոգութեանց առարկայ քրած ենք այս
տազնապր եւ միասնական կեցուածքով մէկէ աւելի ան-
գամներ համասփիտփեան շափանիշով արտայայտած՝
մեր ամբողջական եւ անվերապահ գորակցութիւնը Ղա-
րաբաղի եւ Հայաստանի ժողովուրդին եւ անոր արդար
դատին, որուն վերջնական լուծումը կը նկատենք Լեոնա-
յին Ղարաբաղի միացումը Խորհրդային Հայաստանին:

Այսօր անգամ մը եւս միասնական այս յայտարար-
ութեամբ կը յայտնենք մեր անտեղիտալի գորակցու-
թիւնը Ղարաբաղի եւ Հայաստանի մեր ժողովուրդին եւ
պատկան պետական իշխանութեանց՝ իրենց միասնա-
կան շարունակական եւ վնոական կեցուածքին մէջ ար-
դար լուծման մը ի խնդիր:

Մեր սպասումն ու պահանջը Խորհրդային Միու-
թեան վերին պատասխանատու եւ պատկան մարմիննե-
րէն այն է որ, որպէս արդար մօտեցման դրական փաստ,
հրապարակային դատավարութեան եւ համապատասխան
պատիժներու ենթարկուին այն բոլոր անձերն ու խմբա-
ւորումները, որոնք ոնրային արարքներ գործեցին ըլլա՛յ
Սուվկայիթի եւ ըլլա՛յ Ղարաբաղի մէջ:

Կը սպասենք որ Խորհրդային մամուլը թէ՛ Մոս-
կուայի մէջ եւ թէ՛ Հայաստանի մէջ նշգրիտ եւ ամբողջա-
կան անդրադարձում ունենայ, տեղեկատուական եւ թէ՛
մեկնաբանական տեսակէտէ, տեղի ունեցած դէպքերուն
եւ արարքներուն մասին, ըստ Խորհրդային վերին իշ-
խանութեան կողմէ յայտարարուած եւ բոլորէն ողջունելի
հրապարակայնութեան (կլազնոսթ) սկզբունքներուն եւ
ոգիին:

Կը պահանջենք որ Խորհրդային Հայաստանի պե-
տական իշխանութիւնները առաւել վնոակամութեամբ
հարազատ թարգմանը հանդիսանլով համաժողովրդական
իրաւացի պահանջներուն, հետետողական նախանձա-
խնդրութեամբ եւ օրինական ու ֆաղափական բոլոր մի-
ջոցներով Ղարաբաղի հարցը դարձնեն իրենց առաջնա-
ներթ հարցը արդար եւ ամբողջական լուծման մը յանգե-
լու առաջադրութեամբ, անգոհացուցիչ եւ՝ Ղարաբաղի
ու Հայաստանի ժողովուրդի իրաւունքներու եւ ցանկու-
թեան անհամապատասխան նկատելով ցարդ նախատես-
ուած միջոցառումները:

Կոչ կ'ուղղենք նաեւ Ղարաբաղի եւ Հայաստանի
մեր արի ժողովուրդին, որ խուսափին այնպիսի ծայրա-
յեղական կեցուածքներէ, ինչպէս՝ գործադուլներէ, դա-
սադուլներէ եւ ծայրայեղական կարգ մը կոչերէ ու ար-
տայայտութիւններէ, որոնք կը խանգարեն կարգն ու կա-
նոնը մեր հայրենիքի հանրային կեանքին, ծանր կո-
րուստներու կ'ենթարկեն մեր երկրի տնտեսական, ար-
դիւնաբերական, կրթական, մշակութային կեանքը եւ
նաեւ վնաս կը բերեն մեր ժողովուրդի վարկին, ինչպէս
նաեւ բնականոն յարաբերութիւններուն, ըլլա՛յ Խորհր-
դային վերին իշխանութեանց, ըլլա՛յ Խորհրդային միա-
հանրապետութիւններուն հետ, եւ կը ծառայեն մեր ժողո-
վուրդի թշնամիներու յետին նպատակներուն:

Պէտք է ամէն բանէ վեր պահպանել մեր ժողովուր-
դին միութիւնը, որուն մէջ է մեր գօրութիւնը, եւ՝ հեռա-
տեսութեամբ ու վնոակամութեամբ հետապնդել մեր գե-
րազոյն շահերը:

Ս. Դ. ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ

ՌԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ